

Արտակ Վ. Մաղալյան
Պատմ. գիյր. թեկնածու

**ԱՐՅԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՆԵՆԳԱՓՈԽՈՒՄԸ ԱԳՐԲԵՉԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ***

Գաղտնիք չէ, որ աղբրեջանական պատմագրությունը տարիներ շարունակ ջանք ու եռանդ չի խնայել Հայոց պատմությունը խեղաթյուրելու և ծուռ հայելու մեջ ներկայացնելու համար: Եվ նման պատմահեռության հիմնական թիրախներից մեկը եղել է Արցախ-Ղարաբաղում հայոց պետականության ուշմիջնադարյան դրսևորումների՝ Խամսայի մելիքությունների պատմությունը:

Մակայն վերջին տարիներին այս թեմայով Աղբրեջանում հորինվող, օտար լեզուներով թարգմանվող ու ողջ աշխարհում տարածվող հրապարակումները ակնհայտորեն սկսել են գերազանցել անգամ կեղծարարության «դասականների» համարում ունեցող իրենց նախորդների գործերը:

Նմանատիպ երկու հրապարակումների հեղինակներ՝ Աղբրեջանի ԳԱԱ թղթակից անդամ Օ. Էֆենդիևի¹ և պատմական գիտությունների թեկնածու Գ. Մամեդովայի² հոդվածները, որոնք 2005 թվականին լույս են տեսել Աղբրեջանի ԳԱԱ Ա. Բաքիխանովի անվան պատմության ինստիտուտի կողմից՝ Քյուրակչայի պայմանագրի կնքման 200-ամյակի առիթով հրատարակված «Դարագ: Կյուրեչայ – 200» ժողովածուում, այդ «առաջընթացի» վառ ասպսույցն են:

Իր հոդվածի հենց սկզբում Օ. Էֆենդիևը տարակուսում է այն փաստից, որ «Հայ պատմագրության մեջ Ղարաբաղի մելիքություններն անվերապահորեն համարվում են հայկական, լիովին անտեսվում է նրանց ծագումը կովկասյան աղվաններից»³: Հարց է առաջանում՝ իսկ ի՞նչ վերապահության մասին կարող է խոսք լինել, երբ այդ փաստը հաստատում են ոչ միայն հայկական, այլև օտար սկզբնաղբրյուրները: Օ. Էֆենդիևին և նրա զրչակիցներին ցանկանում ենք հիշեցնել Արցախի մելիքների խնդրագրին ի պատասխան՝ Ռուսաստանի կայսր Պետրոս I Մեծի՝ 1724 թ. նոյեմբերի 10-ի հրովարտակում առկա հետևյալ հանրահայտ

* Հոդվածն ընդունվել է տպագրության 1.06.2011:

1 Տե՛ս Փենդիև Օ., Еще раз о так называемых «Гарабагских меликствах», «Гарабаг: Կյուրեչայ – 200», Баку, 2005, с. 85–90.

2 Տե՛ս Мамедова Г., К вопросу о христианских меликах и меликствах Северного Азербайджана в XVIII в., «Гарабаг: Կյուրեչայ – 200», Баку, 2005, с. 68–84.

3 Փենդիև Օ., указ. соч., с. 85.

տողերը. «Мы одной Армянской народ во особливую Нашу Императорскую милость и протекцию приняли»⁴: Կարծում ենք, որևէ ողջամիտ մարդու մտքով անգամ չի կարող անցնել, որ Պետրոս Մեծը չգիտեր, թե ո՞ր ազգին է վերցնում իր հովանավորության տակ: Նշենք նաև, որ 1720-ական թթ. ազատագրական պայքարի ժամանակաշրջանից մեզ հասած ռուսական վավերագրերում «Հայոց տղնախը» պարզապես թարգմանվում էր որպես «Армянское собрание»:

Մեր տրամադրության տակ կան անսպառ քանակությամբ նմանատիպ փաստեր, որոնց հավաստիությունը վեր է ամեն կասկածից: Այստեղ ցանկանում ենք բերել նաև մի հատված 1769 թվականին վրաց թագավոր Հերակլ II-ի կազմած «Վրաստանին սահմանակից երկրների և քաղաքների նկարագրությունից», որտեղ նա Արցախի մասին գրում է. «Խամսան մի տիրություն է..., որի ամբողջ բնակչությունը հայեր են (այս և հետագա ընդգծումները մերն են – Ա. Մ.)... Այդտեղ է գտնվում հայոց պատրիարքը (Գանձասարի կաթողիկոսը – Ա. Մ.)... Հայերն ունեն մեծ բերդ, անտառներ, ինչպես նաև արգավանդ դաշտեր: Ջիվանջիր-ցիներից կռվի մեջ կմտնեն երկու հազար հինգ հարյուր հոգի, իսկ հայերից՝ չորս հազար հինգ հարյուր: Խամսայի հայերը կռվելու գործում չափազանց քաջ են»⁵: Վրաց թագավորին որևէ մեկը չի կարող մեղադրել կողմնապահության կամ, առավել ևս, իր հարևաններին լավ չճանաչելու մեջ: Կարծում ենք, որ Օ. Էֆենդիևը, Գ. Մամեդովան և նրանց գրչակիցները ևս կհամաձայնեն մեզ հետ, որ Հերակլ II-ը պարզապես չէր կարող չիմանալ կամ, առավել ևս, շփոթել Արցախի մելիքների ազգությունը, որոնց հետ մշտապես գտնվում էր անմիջական հարաբերություններին մեջ:

Ի գիտություն աղբյուրների պատմաշինարարների՝ նշենք, որ Արցախի մելիքներն իրենց համարում էին «հայոց թագաւորաց ազնիւ զինվորաց մնացեալ ժառանգք»⁶: Իսկ Խամսայի մելիքությունների գահերեց Դիզակի Մելիք-Եզանն իր ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրության մեջ հատակ նշում էր. «Ես չքողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից շահ Նադիր գորեղ թագավորը իր գորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շնորհ արեց»⁷: Դիզակի մելիքության մեծանուն տիրակալ Մելիք-Եզանը վախճանվել է 1744 թ. և թողվել Տոդ գյուղի եկեղեցու գավթում, ուր գտնվում էր Մելիք-Եզանյանների տոհմական գերեզմանատունը: Նրա շիրմաքարը կրել է հետևյալ չափաձո տապանագիրը.

«Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն մեծ Մելիքին,
Որ է որդի բարեպաշտին

4 Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, док. 255 и 257, с. 395; Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. II, под ред. А. Иоаннисяна, Ереван, 1967, док. 293 и 294, с. 210.

5 Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. I, под ред. А. Цагарели, СПб., 1891, с. 434–435; Армяно-русские отношения в XVIII веке. Сборник документов, т. IV, под ред. М. Персияна, Ереван, 1990, с. 94–95.

6 Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 179.
7 Փափազյան Գ., Մելիք-Եզանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, «Լրաբեր հաս. գիտ.», 1985, N 5, էջ 77:

Ղուկաս անուն վարդապետին.
Եղև սիրեցեալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին
Յոյժ պատուեցաւ պարսից ազգէն,

Քան զիշխանս Հայոց երկրին: ՌճՂԳ (1744)»⁸:

Պատահական չէ նաև, որ XVIII դարի պարսիկ նշանավոր պատմագիր **Մուհամմադ-Քյազիմը** Մելիք-Եգանին հիշատակում է որպես իմաստուն մի գործչի, որը Նադիր շահի կողմից մեծ սիրո և վստահության էր արժանացել: Վերլուծելով 1723 թ. Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, Մուհամմադ-Քյազիմը հայ զինվորականության առաջնորդների մեջ առաջին տեղը հատկացնում է Մելիք-Եգանին⁹:

Մելիք-Եգանի ժամանակակից մեկ այլ իշխանի՝ Վարանդա գավառի տիրակալ **Մելիք-Հուսեին Մելիք-Շահնազարյանի** շիրմաքարին, որը գտնվում է Ավետարանոց գյուղի Կուսանաց անապատի գավիթ-դամբարանում, արձանագրված է.

«Այս է տապան Մելիք Շահնազարի որդի Մելիք Յուսեինին, թվին ՌճՁԵ (1736), ոգեմ գբանս գովեստի, ի վերայ Մելիք Յուսեինի, գոր գրեցի այս տապանի: Սա էր տէր երկրին Վարանդի, ԼԵ (35) մասն գեղի, սա էր հացով, սեղանով լի, ողորմէր ամէն ազգի, կերպարանօքն էր գովելի, սա ոչ ետ հարկ թագաւորի, ամուր պարիսպ էր աշխարհի, **թագ, պարծանք հայոց ազգի**, պատերազմեաց հետ օսմանցի, յոյժ կտտորեաց ազգէն տաճկի»¹⁰:

Այսպիսով՝ Մելիք Հուսեինը հենց օսմանյան թուրքերի դեմ տարած հաղթանակների համար էր ժամանակակիցների կողմից հռչակվել որպես «**թագ, պարծանք հայոց ազգի**»:

Ցանկանում ենք բերել նաև Ջրաբերդ գավառի համբավավոր տիրակալ **Մելիք-Աղամ (Հաթամ) Մելիք-Իսրայելյանի** օրինակը, որը 1783 թ. հուլիսին՝ իր մահից առաջ, դիմելով ռուսաց արքունիքի նվիրակին, պատգամել է. «**Մի՛ թողեք, որ այս վայրերի տեր հայ ժողովուրդը հույսը կորցնի**»¹¹: Ակնհայտ է, որ մահվան մահճում մնան կտակ կարող էր թողնել միայն իր հայրենիքին անսահմանորեն նվիրված և ազգային ինքնագիտակցության բարձր զգացումով օժտված անձը:

Արցախի գտարյուն հայ մելիքներին գրչի մեկ հարվածով «աղվանացնել» ձգտող Գ. Մամեդովան պարտավոր էր իմանալ այս և բազմաթիվ նմանատիպ փաստերի մասին: Նրա «մասնագիտական» պատրաստվածության մասին պատկերացում տալու համար նշենք, որ վերջինս իր սիրողական գրվածքում Լոռին համարում է «աղվանական» Սյունիքի շրջան¹²: Աղրբեջանցի պատմաչինարարը չի բարեհաճել անգամ քարտեզին նայել այս ցնդաբանությունը գրելուց առաջ, կամ, որ ավելի հավանական է, հույսը դրել է ընթերցողների անտեղյակության վրա:

Մեզ համար պարզ է նաև Գ. Մամեդովայի վարմունքի պատճառը. քանի որ

8 Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Եր., 1982, էջ 178:

9 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 181:

10 Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, էջ 149:

11 Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 250.

12 Տե՛ս Мамедова Г., указ. соч., с. 76–77.

նրան ոչ մի կերպ չի հաջողվել հայոց Լոռին և այնտեղից դուրս եկած հայ մելիքների «աղվանացնել», ուստի նա հարցը որոշել է «լուծել» յուրահատուկ ձևով Լոռին մտցնելով Սյունիքի մեջ: Ինչ խոսք, նման գործելաճոճ միայն քմծիծաղի է արժանի:

Գ. Մամեդովայի հաջորդ հայտարարությունը, թե իբր՝ «աղվան» էր նաև Քաշաթաղի Մելիք-Հայկազը¹³, ոչ այլ ինչ է, եթե ոչ կատարյալ անհեթեթություն: Այստեղ աղբրեջանցի կեղծարարն անգիտանում է այն հանրահայտ իրողությունը, որ **մելիքի Հայկազ անունն իսկ նշանակում է հայ, հայկազուն և հստակ վկայում է նրա ազգությունը:** Բացի այդ, ըստ հայ նշանավոր պատմագիր Առաքել Դավրիժեցու, որի աշխատությանը, ի դեպ, ծանոթ է նաև Գ. Մամեդովան, 1603 թ. իրենց օսմանյան բռնապետությունից փրկելու խնդրանքով Իրանի Շահ-Աբբաս I-ի մոտ զննացած իշխանավորների մեջ էր նաև «**յազգէն Հայոց... Մելիք Հայկազն ի Քշտաղս երկրէն՝ ի Խանաձախ գեղջէ**»¹⁴:

Իսկ նույն հեղինակի այն անհիմն պնդումը, թե «աղվան» Մելիք-Հայկազը նպաստել է նաև «եկվոր» հայերի մշակութային վերելքին՝ նրանց համար կառուցելով Սյունյաց Մեծ անապատի հայոց դպրոցը¹⁵, ընդամենը պարզ խաբեություն է, որով Գ. Մամեդովան առանց գիտակցելու մատնում է ինքն իրեն: Նախ՝ անհասկանալի է, թե ինչո՞ւ պետք է «աղվան» որևէ մեկը հայկական դպրոց կառուցեր, այն էլ՝ «եկվորների» համար: Եվ հետո, պահպանվել է նույն դպրոցի անդրանիկ սաներից մեկի՝ հայ նշանավոր բանաստեղծ Ներսես Մոկացու «**Օրհնեա՛լ տէր Յիսուս փրկիչ**» սկզբնատողով ներբողը՝ նվիրված Սյունյաց Մեծ անապատի հիմնադրմանն ու հիմնադիրներին, որտեղ նա Մելիք-Հայկազի մասին գրում է.

«Շահ Աբաս Պարսից արքայն, որ տիրեաց տանս Արևելեան,
Ընտրեաց զգունդն արեաց պարսից, Օսմանին եկաց յանդիման:
Մինն ի յընտրելոց դասուցն երևեալ քրիստոսադաւան,
Այր հզօր, քաջամարտիկ, ճակատուն բազմաց ախոյեան:
Ընդ որ հաւանեալ արքայն եւ զովեաց բազմաց յանդիման,
Ապա ակն ածէր սիրով միամիտ նորայն քաջութեան:
Կացոյց զնա իշխան երկրի՝ հանեալ ի պատիւ մեծութեան,
Մեծարգոյ փառօք պատուեաց եւ կոչեաց զնա իւր սիրական:
Հախնազար հայրըն նորա յորջորջեալ զնա սեռական,
Հայկազն անուանէր զնա՝ նմանիլ Հայկազնին Տիգրան...»¹⁶:

Պարզից էլ պարզ է, որ հայրենանվեր հայ մելիքը, որին բանաստեղծը համեմատում է Հայկազն Տիգրանի հետ, դպրոց է բացել իր հայրենակիցների համար:

Ինչ վերաբերում է Օ. Էֆենդիևի այն անհիմն պնդմանը, թե իր դիտարկմամբ՝ Արցախի մելիքությունները չեն ունեցել սահմաններ¹⁷, ապա դա ոչ այլ ինչ է, եթե ոչ ինքնախաբեություն կամ սեփական «շարադրության» թեմային լավ չտիրապետելու հետևանք: Արցախի մելիքությունների սահմաններին ծանոթանալու համար Օ. Էֆենդիևին և նրա նման «մտածողներին» խորհուրդ ենք տալիս ընթերցել հայ պատմագիր Միրզա Յուսուֆ Ներսեսովի (Հովսեփ Ներսիսյանց) «**Ճշմարտացի պատմություն**» աշխատությունը, որի աղբրեջաներեն թարգմանությունը տեղ է

13 Տե՛ս նույն տեղում, էջ 77:
14 Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Խանլարյանի, Եր., 1990, էջ 63:
15 Տե՛ս Мамедова Г., указ. соч., с. 77.
16 Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, աշխ. Ա. Դիլուխանյանի, Եր., 1975, էջ 46-47:
17 Տե՛ս Эфендиев О., указ. соч., с. 87.

գտել 1991 թ. Բաքվում հրատարակված «Гарабагнамелер» գրքում¹⁸: Այդ աշխատության «Վարաբաղի Խամսայի մահալները և նրանց մելիքների ծագումը» գլխում կան մանրամասն տեղեկություններ Արցախի մելիքությունների սահմանների մասին¹⁹: Նույն երկի ուրերորդ գլուխը, որը կրում է «Հայոց թագավորության պատմական անցյալի, Խամսայի և Ջանգեզուրի մահալների մասին, այնտեղի մելիքների ու խաների ծագումն ու սերնդաբանությունը» վերտառությունը, սկսվում է հենց այսպես. «**Վարաբաղի հողը հայկական տարածքներից է**»²⁰: Ասված է պարզ ու հստակ...

Ի դեպ, այս հարցը ճիշտ նույն կերպ է ներկայացրել նաև ադրբեջանական պատմագրության հայր համարվող **Աբաս-Կուլի-աղա Բաքիխանովը**, որն իր «**Գյուլիստան-Իրամ**» («**Ռախտային ծաղկանոց**») աշխատության մեջ գրում է. «Դատելով զանազան հանգամանքներից և պատմագիրների տեղեկություններից, կարելի է եզրակացնել, որ Կուրի աջափնյայկը՝ մինչև Արաքսի հետ միախառնվելու տեղը կազմել է Հայաստանի մասը»²¹: Նույն աշխատության մեկ այլ էջում կարդում ենք. «Փանահ խանը, օրեցօր հզորանալով, իր իշխանությանը ենթարկեց հայոց մելիքներին»²²: Ստացվում է այնպես, որ Ադրբեջանի ԳԱԱ Ա. Բաքիխանովի ամվան պատմության ինստիտուտի աշխատակիցների «անհայտ» է... Ա. Բաքիխանովի հայտնի աշխատությունը:

Այժմ տեսնենք, թե Արցախի մելիքությունների մասին ի՞նչ են գրում ներկայիս ադրբեջանցիների կողմից իրենցը համարվող կովկասյան թաթար պատմագիրները: Այսպես, Վարաբաղի խանության վեզիր Միրզա Ջամալ Ջևանշիրն իր «**Վարաբաղի պատմություն**» աշխատության մեջ, որն, ի դեպ, շարադրել է Գյուլիստանի մելիքական տան ներկայացուցիչ, գնդապետ Շամիրխան Մելիք-Բեգլարյանի²³ պատվերով, գրում է. «Իրանի Սեֆյան թագավորների օրոք Վարաբաղի վիլայեթը, իլաթները (քոչվոր ցեղերը – Ա. Մ.), **հայկական Խամսայի մահալները**՝ բաղկացած Դիզակ, Վարանդա, Խաչեն, Չիլաբերդ (Ջրաբերդ – Ա. Մ.) և Թալիշ մահալներից, ենթարկվում էին Գյանջայի (Գանձակի – Ա. Մ.) բեկլարբեկին»²⁴:

Մեկ այլ մահմեդական մատենագիր՝ Միրզա Ադիգյոզալ-բեկն իր «**Վարաբաղ-նամե**» աշխատության մեջ գրում է, որ Նադիր շահը Խամսայի մելիքներին հանում է Գանձակի Չիադողլի խաների ենթակայությունից և վերցնում իր ենթակայության տակ²⁵: Փաստորեն, թաթար պատմագիրը հաղորդում է Նադիր շահի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության կազմավորման մասին: Սույն փաստը միանգամայն իրավացիորեն հենց

18 Տե՛ս Qarabagnamələr (книга составлена и подготовлена к печати Н. Ахундовым), II kitab. Bakı, 1991, s. 5–92.

19 Հայերեն թարգմ. տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, թարգմ. բնագրից, ներածությունը և ծանոթագրությունները Զ. Կոստիկյանի, Եր., 2000, էջ 39-44, Արցախի մելիքությունների սահմանների մասին տե՛ս նաև Магальян А., Арцахские меликства и возникновение Карабахского ханства, «Русский сборник», том VIII, М., 2010, с. 9.

20 Տե՛ս Միրզա Յուսուֆ Ներսեսով, Ճշմարտացի պատմություն, էջ 35:

21 Бакиханов А., Гюлистан-Ирам, Баку, 1926, с. 8.

22 Նույն տեղում, էջ 128:

23 Նրա մասին տե՛ս Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Եր., 2007, էջ 96-97:

24 Мирза Джамал Джеваншир Карабагский, История Карабага, Баку, 1959, с. 65. ուու. թարգմանության մեջ. «армянские магалы Хамсе» (էջ 65), ադրբեջաներեն թարգմանության մեջ. «ермэни Хэмсэ магаллары» (էջ 13).

25 Տե՛ս Мирза Адигезаль-бек, Карабаг-наме, Баку, 1950, с. 48. Հայերեն թարգմ. տե՛ս Մատենադարան, ձեռ. N 4463, էջ 3ա:

այդպես էլ ներկայացված է նաև Ադրբեջանական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից 1958 թ. հրատարակված «История Азербайджана» ակադեմիական հատորում. «**Ղարաբաղի հայոց մելիքներին – Վարանդայի, Ջրաբերդի, Գյուլիստանի, Դիզակի և Խաչենի – հրամայվեց չենթարկվել Գյանջայի բեկլարբեկին**»²⁶:

Վերջում նշենք, որ կովկասյան թաթար մյուս պատմագիրը Ահմեդ-բեկ Ջևանշիրն իր «**Ղարաբաղի խանության 1747–1805 թթ. քաղաքական կացության շուրջ**» երկում ևս Արցախի մելիքությունների մասին հստակ նշում է. «**հայոց Խամասյի մելիքները**»²⁷: Այսպիսով, **Ղարաբաղի խանության բոլոր թաթար (ժամանակակից ըմբռնմամբ՝ ադրբեջանցի) պատմագիրները Արցախի մելիքությունները միանշանակ կերպով ներկայացնում են որպես հայկական կազմավորումներ:**

Ստացվում է այնպես, որ Գ. Մամեդովան, Օ. Էֆենդիևը, Ֆ. Մամեդովան և Ադրբեջանի ժամանակակից մյուս պատմաշինարարները միտումնավոր կերպով «մոռանում են» այս վկայությունների մասին: Բերված փաստերը ծիծաղելի վիճակի մեջ են դնում ժամանակի և տարածության զգացումը կորցրած ադրբեջանցի գեղծարարներին և խոսում են այդ երկրի պատմաբաններին համակած հիշողության կորստի մասին: Այդ ինչպե՞ս է ստացվում, որ ադրբեջանցի պատմաբանները (անգամ տիտղոսակիր ակադեմիկոսները) ընդամենը մի քանի տասնամյակ առաջ ոչինչ չգիտեին, այսպես կոչված, «ուշ աղվանների» մասին, իսկ Բաքվի ժամանակակից գեղծարարները նոր-նոր են միայն նրանց «հայտնաբերում»: Այդ ի՞նչ «ուշ աղվաններ» են, որոնց չեն ճանաչել կովկասյան թաթար պատմագիրները: Այս խորապատկերում կարելի է միայն եզրակացնել, որ ադրբեջանցի ժամանակակից պատմաշինարարների գրվածքները ոչ այլ ինչ են, եթե ոչ **անասհման ցինիզմի յուրօրինակ դրսևորումներ:**

Պատկերն առավել լիարժեք դարձնելու համար բերենք մի ուշագրավ վկայություն XVIII դարի թուրք պաշտոնական (պետության կողմից նշանակված)²⁸ պատմագիր (վակաա-նյուվիս) Իսմայիլ-Ասըմ Էֆենդի Չելեբի-Չաղեի «**Թարիխի Չելեբի-Չաղե**» աշխատությունից: Նկարագրելով օսմանյան բանակի 1726 թ. հարձակումը Ղարաբաղի վրա, վերջինս իր աշխատության «Սղնախի հայերի ոչնչացումը» գլխում գրում է. «Տասնհինգ տարուց ի վեր ապստամբության վիճակում գտնվող և իրենց շրջանների կրզըբաշական գյուղերը ավերող **Սղնախի հայերը**, Գենջեի նվաճումից հետո, չնայած որ հպատակություն էին ցույց տվել և Օսմանյան կառավարության շնորհիվ խաղաղություն և ապահովություն ձեռք բերել, նորից ավազակություն էին սկսել և իրենց շրջանին մոտ գտնվող որոշ վայրերին վնասներ հասցրել... Սղնախցիների պարագլուխը, Ավան անունով մի հայ, թնդանոթով և խումբարայով եկել և Սղնախի վրա ամրացել էր: Հաղթական (օսմանյան – Ա. Մ.) բանակը իր ղեկավարով Սղնախի գնդակի տակ գտնվող Շուշի գյուղը եկավ և հանկարծակի հարձակումով մինչև երեկո մի քանի թնդանոթով գնդակոծեց Սղնախներին: Այդ գիշերը սղնախցին իր տրամադրության տակ գտնվող հայերի հետ միասին փախավ»²⁹: Այնուհետև Չելեբի-Չաղեն հրճվանքով

26 История Азербайджана, т. I, Баку, изд. АН Азерб. ССР, 1958, с. 319.
27 Ахмед-бек Джаваншир, О политическом существовании Карабахского ханства (с 1747 по 1805 год), Баку, 1961, с. 70. ռուսերեն շարադրանքում. «армянских Хамсемеликов» (с. 70), ադրբեջաներեն թարգմանության մեջ. «ермәни хәмсә мәликләриндән» (с. 19).
28 Օսմանյան կայսրությունում տարեգիրները նշանակվում էին սուլթանի կողմից, հաճախ բարձրաստիճան և իրենց գրական հմտությամբ հայտնի անձնավորություններից, այսինքն՝ տարեգրությունը վերածվել էր պետական պաշտոնի:
29 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, կազմեց Ա. Սաֆրաստյանը, Եր., 1961, էջ 158-159:

պատմում է օսմանյան բանակի կատարած ավարառության և սպանությունների մասին. «Հաջորդ օրը իսլամական զինվորները գրավեցին նրանց ինչքերն ու ապրանքները և փախստականներից ձեռք ընկած 400 անկրոն հայերի սպանեցին»³⁰: Օսմանյան «հաղթական» բանակի կողմից «գյավուր հայերի» սպանությունը գովերգող սուլթանական տարեգրի անկողմնակալությունն ավելի քան ակնհայտ է: **Այս հարցում թուրք պաշտոնական պատմագրի անաչառությանը չի կարող կասկածել անգամ ադրբեջանցի ամենամոլեռանդ պալատական պատմաբանը:**

Նույն 1720-ական թթ. կեսերին թուրքական զորքերի դեմ Արցախի սղնախնե-րի մղած հերոսական պայքարի վերաբերյալ այսպես կոչված՝ «Յօլանդիզի կազեթից» թարգմանված **«Յաղագս պատմութեանցն Պերսիու երկրին»** աշխատության մեջ, որը պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, կարդում ենք. «Դարձեալ օսմանցին կամենում է, որ հայոց ուզբաշէքն էլ իւրեան հնագանդեն, բայց ոչ հնագանդին, վասն այն պատճառի, որ Շուշոյ բերքն³¹ իւրեանց հետ է, մանաւանդ՝ իւրեանց տեղն էլ շատ պինդ տեղ այ: Որ և քանիցս անգամ բազում օսմանցոց դօշուն է գնում, որ սոցա հախտահարի, բայց ողորմութեամբն Աստուծոյ կարողանում չեն: Բայց **ընդդէմ նոցին բազում անգամ հայոց Ավան խանն բազում զօրովք հայոց օսմանցուն հետ կռվում է և միշտ յաղթում, որ և այսու զործովք օսմանլուն ձեռն է վեռման հայոց սղնաղէն և երկիւղ է կրում: Այլևս դօշուն չեն աղարկում ի վերայ նոցա, և հայքն սղնաղու բոլորն մնում են աներկիւղ»**³²: Ահա նաև եվրոպական «Յօլանդիզի կազեթից» թարգմանված մի տեղեկություն՝ Արցախի սղնախականների ազգային պատկանելության վերաբերյալ:

Այս վկայություններից հետո ցանկանում ենք անդրադառնալ նաև Արցախի մելիքությունների մասին ռուս ռազմական գործիչների հաղորդած տեղեկություններին: Այսպես, ռուս մեծ զորավար **Ա. Սուվորովն** իր թղթերում Խամսայի մելիքությունների մասին գրում է. «Հայոց մեծ թագավորությունից (Մեծ Հայքից – Ա. Մ.), շահ Աբբասից հետո երկու դարերի ընթացքում ինքնիշխան մնաց Ղարաբաղ գավառը: Այժմ այնտեղ հայտնի են հինգ մելիքներ (մելիքություններ – Ա. Մ.)»³³: Իսկ Ռուսաստանի պետական գործիչ, իշխան **Գրիգորի Պոտյոմկինը** 1783 թ. ապրիլի 6-ի հրամանագրով իր ազգական, գեներալ Պավել Պոտյոմկինին է տվել հետևյալ հանձնարարությունը. «Շուշիի Իբրահիմ խանին պետք է տապալել, քանի որ սրանից հետո **Ղարաբաղը պետք է կազմի հայկական անկախ, Ռուսաստանից բացի ոչ ոքի չենթարկվող մարզ**»³⁴: Այս ռուս նշանավոր գործիչները 1780-ական թթ. հայ-ռուսական հարաբերությունների³⁵ առանցքային դերակատարներն են եղել, ուստի պատահական չէ, որ պատմաշինարարության սարդոստայնում խճճված ադրբեջանցի հեղինակները համառորեն խուսափում են նրանց հաղոր-

30 Նույն տեղում, էջ 159:

31 Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է, որ Շուշիի բերդը գոյություն է ունեցել դեռևս XVIII դարի սկզբին: Տե՛ս նաև Армяно-русские отношения в первой трети XVIII века. Сборник документов, т. II, ч. I, под ред. А. Иоаннисян, Ереван, 1964, с. XLI.

32 Մատենադարան, ձեռ. N 9648, էջ 33ա, տես Նադիր շահի դարաշրջանի պատմագրական հուշարձանները, աշխ. Ա. Մաղալյանի, Եր., 2010, էջ 59-60:

33 Нерсисян М., А. В. Суворов и русско-армянские отношения в 1770–1780-х годах, Ереван, 1981, с. 135.

34 Армяно-русские отношения в XVIII веке, т. IV, с. 239.

35 1780-ական թթ. հայոց ազատագրական պայքարի մասին տես Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1990.

դաժ տեղեկությունները վկայակոչելուց:

Ինչ վերաբերում է նախախորհրդային շրջանի ռուս պատմաբանների աշխատություններին, ապա այստեղ պատկերն առավել քան հստակ է: Այսպես, նշանավոր պատմաբան, ակադեմիկոս **Պ. Բուսկովը** գրում է. «Ղարաբաղը երկիր է Արաքս գետի ձախ և Կուր գետի աջ ափերի միջև, Մուղանի դաշտից վեր, լեռներում: **Այնտեղի հիմնական բնակիչները հայեր են**, որոնք կառավարվում են իրենց 5 մելիքների կամ ժառանգական իշխանների կողմից, ըստ սղնախների կամ գավառների թվի. 1. Ջրաբերդ, 2. Իգիրմիդորդ (Գյուլիստան – Ա. Մ.), 3. Դիզակ, 4. Վարանդա, 5. Խաչեն: Նրանցից յուրաքանչյուրը կարող է հանել 1000 զինվոր: Այդ մելիքները, Նադիր շահի վճռով, անմիջականորեն կախված էին շահից»³⁶:

Մեկ այլ հայտնի հեղինակ՝ ռազմական պատմաբան Վ. Պոտտոն իր **«Ղարաբաղի առաջին կամավորները»** աշխատության հենց առաջին էջում գրում է. «Հայկական երբեմնի մեծ թագավորության բեկորներից պարսիկներին պատկանող Ղարաբաղն է միայն պահպանել իր համար, որպես անցած մեծության հուշարձաններ, հայ մելիքների այն տոհմական կալվածքները, որոնք գրադեցնում էին Արաքսից մինչև Կուրակ-չայն ընկած ամբողջ տարածությունը»³⁷: Նույն պատկերն է նաև մյուս ռուս հեղինակների աշխատություններում³⁸, սակայն հրապարակման ծավալը չչարաշահելու նպատակով բավարարվենք այսքանով:

Ցանկացած ողջամիտ մարդու համար էլ պարզ է, որ Արցախի մելիքների ազգային պատկանելության հարցում հայ, ռուս, վրացի, եվրոպացի, պարսիկ, թուրք և կովկասյան թաթար բազմաթիվ գործիչներն ու հեղինակները չէին կարող միաժամանակ սխալվել՝ «ճշմարտության դափնին» զիջելով աղբրեջանցի ժամանակակից պատմաշինարարներին, որոնց «աշխատությունները» խոսում են միայն այդ երկրում պատմագիտության վախճանի մասին:

Վերջում ցանկանում ենք անդրադառնալ նույն «Гарабаг: Курекчай – 200» ժողովածուում տեղ գտած մեկ այլ քստմենլի հոդվածի, որի հեղինակն է աղբրեջանցի տխրահռչակ պատմաշինարար Ֆարիդա Մամեդովան: Վերջինս իր հոդվածում «բացահայտում» է, թե ինչու են իրենց կատաղի հարձակումներն ուղղված հատկապես 1720-ական թթ. հայոց ազատագրական շարժումների և Արցախի հայկական մելիքությունների դեմ: «Այդ մելիքությունների պատմությունից բացի հայոց XVIII դ. պատմության զինանոցում ուրիշ ոչինչ չկա»³⁹, – ինքնագոհ կեցվածքով իր «խաղաթղթերն» է բացում փորձառու պատմագողը⁴⁰:

Այնինչ չափն ու սահմանը կորցրած աղբրեջանցի պատմաշինարարն իր հոդվածը գրելուց առաջ պարտավոր էր գիտակցել, որ եթե հայերից և ներկայիս Աղբրեջանի տարածքում բնակված մյուս ժողովուրդներից գողացված պատմությունը վերադարձվի իրենց իսկական տերերին, ապա Աղբրեջանի պատմությունից հայր ու որդի Ալիևներից բացի ոչինչ չի մնա:

36 Бутков П., Материалы для новой истории Кавказа, с. 1722 по 1803 год, ч. I, СПб., 1869, с. 385; Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, т. I, составитель Ю. Барсегов, М., 2008, с. 73–74.
37 Պոտտոն Վ., Ղարաբաղի առաջին կամավորները, Եր., 1974, էջ 5:
38 Ի դեպ, այս անառակելի փաստը ճարտաստյալ ընդունում է նաև Գ. Մամեդովան. տե՛ս Мамедова Г., ук. соч., с. 73.
39 Мамедова Ф., Истина о Гарабагской проблеме, «Гарабаг: Курекчай – 200», Баку, 2005, с. 50.
40 Վերջինիս կեղծարարությունների քննադատությունը տե՛ս Սվազյան Դ., «Ուշ արվանների» առասպելը, «Վե՛ն», 2009, թիվ 3, էջ 129-140:

FALSIFICATION OF THE HISTORY OF THE ARTSAKH MELIQDOMS IN AZERBAIJAN HISTORIOGRAPHY

Artak V. Maghalyan

The history of the Meliqdoms of Artsakh constitutes an important segment of the history of Armenia. In the absence of an independent Armenian statehood, for centuries the Meliqdoms represented the sole power which could potentially serve as a basis for the resurrection of the Armenian state.

For decades, Azerbaijani historians have been trying to falsify the History of Armenia and to present events related to Armenia and the Armenians through reflections in distorted mirrors of the Azerbaijani state propaganda. In this context, Armenian Artsakh – with its past and present – remains the primary target of Azerbaijani pseudo-historical constructions. One can hardly find a period in the history of Artsakh which would not be purposefully falsified by the Azerbaijani historian-falsifiers. The latter are targeting particular at the remnants of the Armenian statehoods in Artsakh, namely the history of the Meliqdoms of Khamsa (Five Principalities). Azerbaijani “studies” published in Azerbaijan and abroad make all efforts to present the Meliqdoms of Artsakh as “Albanian” (of Caucasian Albania) entities, which fall in sharp contrast and contradiction to accounts of numerous historical sources and original documents of the time. The Azerbaijani state-sponsored propaganda translates these pseudo-scientific “studies” into various languages and disseminates them around the world.

The present article focuses on two such pseudo-scientific publications, namely by O. Efendiev, Corresponding Member of the Azerbaijani National Academy of Sciences, and G. Mamedova, Candidate of Historical Sciences. Their articles were included in a compilation entitled “Garabag: Kurekchay – 200” published by A. Bakikhanov Institute of History of the Azerbaijani Academy of Sciences on the occasion of the 200-th anniversary of the Treaty of Kurakchay.

The present article reveals the falsifications of the above-mentioned Azerbaijani authors regarding the Meliqdoms of Artsakh in the 17–19-th centuries, and on the basis of reliable historical sources, as well as original documents demonstrates the falsehood of the Azerbaijani “historiographical theories”.